ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «29» 01 2025թ

ՀՐԱՄԱՆ N 59-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Կադաստրի կոմիտեի գնումների կազմակերպման բաժնին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման համար, մասնավորապես ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի 1902-Լ որոշումից բխող Կադաստրի կոմիտեի 2025 թվականի հաստատված աշխատանքային ծրագրի երկու կետով, Կոմիտեի գնումների գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ և բաժնի գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

1/29/2025

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Հավելված 1
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
«29» 01 2025 թ.
N 59-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

1. Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գնումների կազմակերպման բաժնին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման համար, մասնավորապես ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի 1902-Լ որոշումից բխող Կադաստրի կոմիտեի 2025 թվականի հաստատված աշխատանքային ծրագրի երկու կետով՝ համակարգչային սերվերի լրակազմի վարձակալության և ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կետերի դիտարկման նպատակով, Կոմիտեի գնումների գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ և բաժնի գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ներգրավել փորձագետ:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար փորձագետ ներգրավում է **1** (մեկ) տարի ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը

Փորձագետը 1 (մեկ) տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

- փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում
- ակնկալվում է Կոմիտեի աշխատանքային ընթացակարգերի իրականացման նորարարական լուծումներ:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը՝

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել կիսամյակային կտրվածքով, մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 5-ը:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

1) գնման ընթացակարգերի վարման ճշտություն
2) գնման ընթացակարգի օրենքով նախատեսված ժամկետների պահպանում:

6. Փորձագետին ներկայացվող պահանջները

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- ռուսերեն լեզվի գերազանց տիրապետում,
- թիմային աշխատանքի ունակություն,
- հաշվետվությունների, փաստաթղթերի կազմման և ներկայացման ունակություն,
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,
- ժամանակի կառավարում,
- «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության իմացություն
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնումների որակավորված մասնագետ լինելու հավաստում